ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 22.11.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/59

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.10.2017թ. թիվ 03/26-3/18784-17 գրությամբ «Ֆիրմա-Արեալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 10.10.2017թ. թիվ 05/665 գրության հիման վրա, 17.10.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Ֆիրմա-Արեալ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը 10.10.2017թ. թիվ 05/665 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 2017թ. կարիքների համար գնանշման հարցման միջոցով քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՓԱԲ-ԳՀԱՊՁԲ-17/6» ծածկագրով գնման ընթացակարգ:

Գնման ընթացակարգի շրջանակում հայտեր են ներկայացրել թվով երեք կազմակերպություններ:

Ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Ֆիրմա-Արեալ» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ հայտերի գնահատման նիստում «Ֆիրմա-Արեալ» ՍՊԸ-ն (այսույետ՝ Ընկերություն) ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից 36-37-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ չափաբաժինների համար:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի և գնանշման հարցման հրավերի 1-ին մասի 8.12 կետի համաձայն հարցում է կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսույետ՝ կոմիտե) առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Հարցման հիման վրա ստացվել է հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան եզրակացություն առ այն, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 19,903 ՀՀ դրամ, ինչը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը՝ ժամկետանց պարտավորությունները գերազանցում են իր ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը:

Այսպիսով, ելնելով վերոնշյալից, մրցույթի արդյունքում «Ֆիրմա-Արեալ» ՍՊԸ-ն չի ճանաչվել ընտրված մասնակից «ՓԱԲ-ԳՀԱՊՁԲ-17/6» ծածկագրով գնման ընթացակարգի 36-37-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ չափաբաժինների համար»:

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն ՊՈԱԿ-ի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «Ֆիրմա-Արեալ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Խորհուրդը դիմել է «Ֆիրմա-Արեալ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.10.2017թ. թիվ 03/26-3/18784-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Նիկիտա Բաղալյանը:

4. ՍՑ-ԷՍ-2017/59 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.10.2017թ. թիվ 03/26-3/18784-17 գրությունը և կից փաստաթղթերը, «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 10.10.2017թ. թիվ 05/665 գրությունը, «ՓԱԲ-ԳՀԱՊՁԲ-17/6» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՓԱԲ-ԳՀԱՊՁԲ-17/6» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 14.09.2017թ. նիստի թիվ 3, 28.09.2017թ. նիստի թիվ 4, 02.10.2017թ. նիստի թիվ 5 արձանագրությունները, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 20.11.2017թ. Խորհրդին ներկայացված եզրակացությունը.

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված N ՓԱԲ-ԳՀԱՊՁԲ-17/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Ֆիրմա-Արեալ» ՍՊԸ-ն՝ 36-37-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ չափաբաժինների մասով:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՓԱԲ-ԳՀԱՊՁԲ-17/6» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 14.09.2017թ. ժամը 10:30-ին կայացած նիստի N 3 արձանագրության 3 կետի «գ» ենթակետով որոշել է ընթացակարգի 36-37-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ չափաբաժիններով «Ֆիրմա-Արեալ» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության «զ» ենթակետով Հանձնաժողովը որոշել է հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Հանձնաժողովի 28.09.2017թ. ժամը 10:45-ին կայացած նիստի N 4 արձանագրության 1-ին կետով արձանագրվել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի՝ հրավերով սահմանված պահանջի առկանության վերաբերյալ եզրակացության համաձայն՝ «Ֆիրմա-Արեալ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների չափը կազմել է 19,903 ՀՀ դրամ, ինչը գերազանցում է Օրենքով նախատեսված շեմը:

Հանձնաժողովը 02.10.2017թ. ժամը 10:15-ին կայացած նիստի N 5 արձանագրության 3-րդ կետով «Ֆիրմա-Արեալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր տվյալների համապատասխանության մասին,
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով նախատեսված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում

է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում նույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Հրավերի՝

• 8.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում, նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 8.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 8.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության տնօրենը հայտնեց, որ իրեն հայտնի չեն 08.09.2017թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ նախկինում արտացոլված 19,903 ՀՀ դրամ հարկային պարտավորության առաջացման պատճառները՝ միաժամանակ Խորհրդին ներկայացնելով 26.09.2017թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ՀՎՍՎ թիվ 3 բաժնի կողմից տրված տեղեկանքը, ըստ որի Ընկերությունը 20.09.2017թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով պարտավորություններ չունի:

Պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով Խորհուրդը 24.10.2017թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ խնդրելով վերջինիս տալ եզրակացություն այն մասին, արդյո՞ք Ընկերությունը հայտը ներկայացնելուն օրվա դրությամբ (08.09.2017թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ, թե՝ ոչ:

Խորհրդի հարցմանն ի պատասխան՝ 20.11.2017թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից տրամադրվել է եզրակացություն առ այն, որ «Ֆիրմա Արեալ» ՍՊԸ-ի 08.09.2017թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ նախկինում արտացոլվող 19,903 ՀՀ դրամ հարկային պարտավորությունը վերահաշվարկվել է 06.10.2017թ.-ին հարկ վճարողի կողմից 2017թ. շրջանառության հարկի 2-րդ և 3-րդ եռամսյակների ճշգրտված հաշվարկներ ներկայացնելու հետևանքով, ինչի արդյունքում 08.09.2017թ.-ի դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ առկա չեն:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Ֆիրմա Արեալ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա՝ 08.09.2017թ., դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով՝ իր կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.
- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նկատի ունենալով, որ «Ֆիրմա Արեալ» ՍՊԸ-ն հայտով ներկայացրել է հայտարարություն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չունենալու մասին, սակայն Կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության համաձայն արձանագրվել է ժամկետանց պարտավորությունների առկայությունը, Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.10.2017թ. «Ֆիրմա Արեալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել:

2. «Ֆիրմա Արեալ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ